

բար ու խաղաղասէր, քան ընկերվարականները ընդհանրապէս եւ դերմանականը՝ մասնաւորապէս:

Բայց չէ՞ որ իրապաշտ քաղաքականութիւնը սուր ու սուսերից դուրս եւ յաճախ նըրանից է՛լ աւելի հատու ուրիշ գէնքեր ունի իր ձեռքին: Միայն թէ ազգային քաղաքականութեան իտէպան է, աղբի եւ հայրենիքի ամբողջացումը, որ չէ ուրացում եւ լքում, այլ կարող ձեռքերի մէջ առնուում ու պաշտպանուում:

Ուրիշ բան չէ հետապնդում նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան որդեգրած ազգ. քաղաքականութեան «Միացեալ Հայաստանի» դադարփարը:

V

Սեփական հայրենիքի ամբողջացումը, պատմականօրէն անջատ ցեղային հատուածների համախմբումը եւ միացումը, — դա մեր օրերի կարգախօսն է գիտակցութեան եկած բոլոր ազգութիւնների, մեծ թէ փոքր: Ազգային լինելով մէկտեղ, նա դերազանցօրէն աշխատաւորական է եւ համամարդկային: Եւ ոչ միայն Գերմանիայում, այլ եւ եւրոպական բոլոր երկիրներում պարզորոշ նկատելի է այդ հակումը: Նրանց օրինակին են հետեւում այսօր ասիական ժողովուրդները, յաճախ նրանցից իսկ փոխ առած գէնքերով պայքարելով իրենց դէմ:

Մէկ կամ երկու սերունդի դործ չէ, հարկաւ, հայրենիքի եւ ազգութեան կատարեալ ամբողջացումը: Վերջինս դժուարանում է մասնաւոր այն ազգութիւնների համար, որոնք նօսր են համբանքով, թոյլ ներքին կազմակերպութեամբ, տկար՝ քաղաքական վերածնութեան պահանջով, որպէս հետեւանք դարաւոր ստրկական կեանքի: Վերջինների շարքին ենք պատկանում նաեւ մենք, հայերս: Գրանից է նաեւ ահուկութիւնը մեր քաղաքական երկունքի:

Եւ սակայն ազգային վերածնունդի ճամբան վարդերով ծածկուած չէ եղել շատ աւելի նպաստաւոր պայմաններում ապրած ժողովուրդների համար եւս: Մի ամբողջ դար տեւեց, մինչեւ որ իրականացաւ, օրինակի համար, Բալկանեան ժողովուրդներից՝ ոմանց

հողային եւ ցեղային ամբողջացումը: Մի հարիւրամեակ պէտք եղաւ, մինչեւ որ գլուխ եկան «Միացեալ Ռումանիան», «Միացեալ Սերբիան»: «Միացեալ Յունաստանը» կէս ճամբու վրայ մնաց, «Միացեալ Բուլղարիան» իր յոյսերի իրականացման նախօրէին փետրաթափ եղաւ: Եւ սակայն այդ ասել չէ, թէ դրանք յուսաբեկուեցան, լքեցին իրենց ազգային իտէպը: Բնա՛ւ:

Նայեցէ՛ք բալկանեան պետութիւնների պատմական աշխարհագրութեան քարտէսին: Աւելի հին շրջանները թողէք մի կողմը, վերջըրէք վերջին 15-20 տարիները, ի միտ առէք բալկանեան պատերազմներից ասդին կատարուած քաղաքական փոփոխութիւնները:

Փոքրիկ Սերբիան, կտրուած ծովերից եւ աշխարհից, 15-20 տարի սրանից առաջ ունէր ընդամէնը 48 հազար քառ. քիլմ. տարածութիւն եւ 2½ միլիոն բնակիչ: Ասել է՝ Սերբիան, գրեթէ մէկ դար անկախ դոյութիւն ունենալով հանդերձ, իր հայրենի հողերի եւ իր հարազատ ժողովուրդի ոչ աւելի քան 1/5 էր պարփակում իր սահմանների մէջ: Տարածութեամբ էլ նա հաղիւ 1½ անգամ, իսկ բնակիչների թուով 2½-3 անգամ աւելի մեծ էր, քան այսօրուան Հայաստանը: Իսկ ներկայիս Հարաւ-Սլաւիան, որ է «Միացեալ Սերբիան, ունի 220 հազար քառ. քիլմ. տարածութիւն եւ 13 միլիոն բնակիչ: Ասել է՝ եւ բնակչութեամբ, եւ տարածութեամբ նա 5 անգամ աւելի մեծ է, քան նախապատերազմեան Սերբիան:

Վերցնենք ուրիշ օրինակ — Ռումանիան: Բալկանեան պատերազմներից առաջ նա ունէր 131,000 քառ. քիլմ. տարածութիւն եւ 6½ միլիոն բնակիչ: Իսկ «Միացեալ Ռումանիան» այսօր կրնապատիկ մեծ է ու բազմամարդ, ունի 260 հազար քառ. քիլմ. տարածութիւն եւ 13-15 միլիոն բնակիչ:

Յունաստանը բալկանեան պատերազմներից առաջ ունէր 64 հազար քառ. քիլմ. տարածութիւն եւ ընդամէնը 2½ միլ. բնակիչ, իսկ այսօր, անգամ իր մեծ յուսախարութիւններից յետոյ, բնակիչների թուով աւելի քան կրկնապատկուել, տարածութեամբ էլ զգալիօրէն մեծացել է: